ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

24 հոկտեմբերի 2022թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամներից 14 անդամները և Ծ/ԻՏ ամբիոնի դոցենտ,տգթ. , Ռ. Յոլչյանը:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1)2021-22 ուս. տարվա II կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում:

2)2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցի քննարկում և հաստատում:

3)Հետազոտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:

4) Ամբիոնում դրամաշնորհային ծրագրերում ներգրավված ղեկավարների հաշվետվություններ:

Առցանաց քվեարկությամբ՝ 14 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/1

- **Հաստատել նիստի օրակարգը:**

Օրակարգի առաջին, «2021-22 ուս. տարվա II կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ վիճակը տխուր է: Երկրորդ կուրսի երկու ուսանող ունեն կրեդիտի պարտք, տաս ուսանողներ տեղափոխվել են Տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսներ մասնագիտության հեռակա ուսուցման համակարգ: Հինգ ուսանողներ դուրս են մնացել հետևյալ հիմնավորումներով.

- ➔ մեկ ուսանող տեղափոխվել է արտերկիր բնակության,
- ➔ երկու ուսանողներ ինքնակամ հրաժարվել են ուսումը շարունակել,
- ➔ երրորդ կուրսի երկու ուսանողներ ցուցաբերել են անբավարար ակադեմիական արաջադիմություն, կրեդիտների պարտքը գերազանցել է 12 կրեդիտը:

Հունվար ամսից, ուսանողները կարող են վերականգնվել համաձայն Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի:

Արտահայտվեցին

Գ. Սարգսյանը, Մ. Զաքարյանը, Մ. Ճաղարյանը, Ք. Օթարյանը,Տ. Ջելոյանը:

Գ. Սարգսյանը նշեց, որ ստատիստիկական տվյալները բավարարում են : Կա՞ն պատճառներ, որ կարելի է կանխել: Տեղի ունեցավ բուռն քննարկում: Հիմնական պատճառաբանությունը սոցիալական խնդիրներն են: Գ. Սարգսյանը ներկայացրեց, որ կա դասակարգման երկու խումբ: Առաջինը սոցիալական խնդիրներ ունեցողներն են, իսկ երկրորդը ՝ ազդեցությունների տակ ընկնողները: Դրանց հետ վերաբերմունքները տարբեր պետք է լինի:

Երկրորդ դեպքում դասախոսական կոլեկտիվի հետ շատ կարևոր է նաև իրենց պարտաճանաչ, լավ սովորող տարեկիցների, կուրսընկերների ազդեցությունը և աջակցությունը: Վատ է, որ կան ուսանողներ, որոնք անթաքույց հայտարարում են առանց գիտելիքի, միայն դիպլոմ ձեռք բերելու նպատակների մասին, մանավանդ այն,

որ զինվորական կառույցներում կանցնեն բարձր վարձատրությամբ աշխատանքի, որը շատ ցավալի է: Այս հարցը անհրաժեշտ է բարձրացնել բարձր ատյաններում, քանի որ միայն մասնաճյուղի խնդիրը չէ:

ՈՐՈՇՈՒՄ 1/2

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

Ընդունել ի գիտություն

Օրակարգի երկրորդ՝ «2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցի քննարկում և հաստատում» հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը: Նա նշեց,որ 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են կազմակերպել ս.թ հոկտեմբերի 27-ից մինչեւ նոկեմբերի 3-ը ընկած ժամանակահատվածում: Կազմվել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ժամանակացույցերը: Ֆակուլտետում իրականացվել են նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներ: Կազմվել են ընթացիկ ստուգումների և քննությունների կազմակերպման ժամանակացույցերը, դրանք քննարկումների նպատակով տրամադրվել են ամբիոններին, ապա ներկայացվել են հաստատման, ուղարկվել կայքում տեղադրման, դրանց մասին տեղեկացվել են դասախոսները և ուսանողները:

ՈՐ ՈՇՈՒՄ 1/3

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ընդունել ի գիտություն:

Օրակարգի երրորդ՝ «Հետազոտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում » հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հետազոտական աշխատանքներ են իրականացվում Ծ/ԻՏ ամբիոնում։

Հետազոտական աշխատանքների թեմաների բաշխված ցանկը ներկայացվեց քննարկման։

Արտահայտվեցին.

Ա. Հովակիմյանը, Գ. Սիմոնյանը, Գ. Սարգսյանը։

Ա. Հովակիմյանը ներկայացրեց, որ հետազոտական աշխատանքներ են իրականացվելու երրորդ կուրսում մաթ. մոդելավորում և թվային մեթոդեր առարկայից և չորրորդ կուրսում WEB ծրագրավորում առարկայից։ Թեմաները քննարկվել են ամբիոնում, ներկայացվել են ուսանողներին։

Ա. Մակարյանը ուսանողներին ծանոթացրել է «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԻՆ։

ՈՐՈՇՈՒՄ 1/4

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

Հաստատել հետազոտական աշխատանքների թեմաների բաշխված ցանկը։

Օրակարգի չորրորդ՝ «Ամբիոնում դրամաշնորհային ծրագրերում ներգրավված ղեկավարների հաշվետվություններ» հարցի վերաբերյալ

լսեցին

ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորված ֆակուլտետի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի . մ. գ. թ. դոցենտ, ֆ, Ալեքսան Մարգարյանի ղեկավարությամբ իրականացվող «Տավուշի մարզի որոշ հանրակրթական դպրոցների, հյուրատների և բուժհիմնարկների շրջակայքում աղմուկի ուսումնասիրություն» վերնագրով հետազոտական աշխատանքի առաջին եռամսյակի հաշվետվության մասին։ Զեկուցումով հանդես եկավ Գ. Սիմոնյանը։ Գ. Սիմոնյանը նշեց, որ հաշվետու ժամանակում «Տավուշի մարզում օրգանական

գյուղատնտեսության զարգացման հեռանկարները» թեմայով հետազոտական աշխատանքի ընթացիկ հաշվետվությանը քննարկվել է նաև Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի նիստում: Աշխատանքը կատարվել է ըստ աշխատանքային ժամանկացույցի: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են Ռուսաստանի Սարատով քաղաքում տեղի ունեցող «Экологический мониторинг опасных промышленных объектов: современные достижения, перспективы и обеспечение экологической безопасности населения»,գիտական կոնֆերանսում: А.Г. Симонян, А.Ш. Маркарян, С.Г. Гулакян МОНИТОРИНГ ШУМА НА УЧАСТКЕ ГОРОДА ИДЖЕВАНА -АВТОДОРОГИ НОЕМБЕРЯН–ЕРЕВАН :

Արտահայտվեցին -
Գ. Գուլակյանը, Մ.Ճաղարյանը

Արտահայտվողները դրական կարծիք հայտնեցին հետազոտական աշխատանքի կատարման մասին և նշեցին, որ ներկայացված հաշվետվությունում աշխատանքները կատարվել են ըստ պայմանագրով նախատեսված առաջադրանքի և օրացուցային պլանին համապատասխան:

Լսեցին

ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորված բնագիտական ֆակուլտետի «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի դոցենտ, տ. գ. թ., Ռոբերտ Մառլենի Յոլչյանի ղեկավարությամբ իրականացված «Տավուշի մարզի ջերմատնային տնտեսությունների համար ինֆորմացիոն ցանցի մշակում» վերնագրով հետազոտական աշխատանքի առաջին եռամսյակի ընթացիկ հաշվետվության մասին : Զեկուցումով հանդես եկավ Ռ.Մ.Յոլչյանը : Զեկուցողը նշեց, որ Տավուշի մարզպետարանի կողմից մարզում գործող ավելի քան 400 ջերմատների մասին տրամադրված տեղեկատվության հիման վրա կատարվել է համակարգված տեղեկատվության ուսումնասիրություններ: Արդյունքում ուրվագծվել է հետազոտության արդյունքների պոտենցիալ շահառուների շրջանակը, ջերմատներում չափվող տեխոնոլգիական պարամետրերը և գնահատվել են տեղեկատվական

համակարգի կիրառվելու արդյունավետությունը: Հետազոտության արդյունքում մշակվել են մի շարք սխեմաներ և ծրագրային ապահովման միջոցներ, որոնց հիման վրա ավարտին են մոտեցել ինֆորմացիայի հավաքագրման և կարճ տարածությունում /մինչև 1 կմ/ հաղորդելու համակարգը, սկսվել են դաշտային առաջին փորձարկումները, որոնց ընթացքում միմյանցից առանձին չափվում են հողի և օդի առանձին ջերմաստիճանը և խոնավությունը: Պլանավորվում են փորձարկումների հաջող ավարտից հետո համակարգը կիրառել ջերմատան պայմաններում:

Ներկայացվել է «Ռ.Մ.Յոլչյան, Գ.Վ.Գուլակյան ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ» թեմայով գիտական մեկ զեկույց ՀԱՊՀ 2022թ նոյեմբեր ամսում կայանալիք ամենամյա գիտաժողովին /նյութերը կտպագրվեն 2023թ-ին/:

Արտահայտվեցին - Գ.Սիմոնյանը, Ա.Հովակիմյանը

Արտահայտվողները դրական կարծիք հայտնեցին հետազոտական աշխատանքի կատարման մասին և նշեցին, որ ներկայացված հաշվետվությունում աշխատանքները կատարվել են պայմանագրով նախատեսված առաջադրանքի և օրացուցային պլանին համապատասխան:

ՈՐՈՇՈՒՄ 1/5

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

- «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության » ամբիոնի դոցենտ, ֆ. մ.գ. թ . , Ա. Մարգարյանի ղեկավարությամբ իրականացված «Տավուշի մարզի որոշ հանրակրթական դպրոցների, հյուրատների և բուժհիմնարկների շրջակայքում աղմուկի ուսումնասիրություն» թեմայով հետազոտական աշխատանքը առաջին եռամսյակում կատարված է պատշաճ կարգով և համապատասխանում է նման աշխատանքների ներկայացման որակական չափանիշներին:

Աշխատանքի ընթացակարգին, բովանդակությանն ու արդյունքներին տալ դրական եզրակացություն։

- Ռ.Մ. Յոլչյանի ղեկավարությամբ իրականացված «Տավուշի մարզի ջերմատնային տնտեսությունների համար ինֆորմացիոն ցանցի մշակում » թեմայի շրջանակներում առաջին եռամսյակում իրականացված աշխատանքների ընթացքը համարել համապատասխան նման ներկայացման որակական չափանիշներին և առաջարկվեց նպատակահար համարել շարունակել թեմայի ֆինանսավորումը։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԵՊՀ ԻՄ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ.

2020-21ՈՒՍ ՏԱՐԻ

N	ԱԱՀ	
1.	Մանվել Աշոտի Զաքարյան,	Գիտխորհրդի նախագահ
2.	Քնար Վլադիմիրի Օթարյան	Քարտուղար
3.	Հովակիմյան Աննա Սեդրակի,	Ծ/ԻՏ ամբիոնի վարիչ
4.	Սիմոնյան Գևորգ Սարգսի,	ԸՄ/Բ ամբիոնի վարիչ
5.	Գուլակյան Գեղամ Վոլոդյայի,	Ֆակուլտետի արհմիության նախագահ
6.	Ճաղարյան Մարիետա Ալբերտի	Ծ/ԻՏ ամբիոնի ասիստենտ
7.	Թովմասյան Արտաշես Բարսեղի	Digital wave ընկերության տնօրեն

8.	Սարոյան Կիմ Ֆուրմանովի	«Սիներջի ինթերնեյշնըլ սիսթըմզ» ընկերության DB ինժեներ
9.	Խաչատրյան Արև Վահեի	2-րդ կուրսի ավագ
10.	Խաչատրյան Գառնիկի Ժորայի	ՈՒԽ փոխնախագահ
11.	Ստեփանյան Հասմիկ Լևոնի	ԲԳՖ ՈՒԽ նախագահի տեղակալ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հաստատում եմ

Դեկանի ժ/պ Մ.Ա.Զաքարյան

“Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա”
կրթական ծրագրի վերանայման ժամանակացույց

	Աշխատանքի բովանդակություն	Պատասխանատու անձ/ աշխատանքային խումբ	Ժամկետ	Կատարողականի ցուցիչներ
1.	Հարցման թերթիկի մշակում Google Form ձևաչափով	Հովակիմյան Ա. Ճաղարյան Մ. Ստեփանյան Հ.	10.02.21-15.02.21	Հարցաթերթիկ Google Form-ի ձևաչափով
2.	Կրթական ծրագրից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման կազմակերպում	Հովակիմյան Ա. Ստեփանյան Հ.	15.02.21-15.03.21	Լրացված Google Form-եր
3.	Կրթական ծրագրից դասախոսների	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ.	15.02.21-15.03.21	Լրացված Google Form-եր

	բավարարվածության վերաբերյալ հարցման կազմակերպում	Ճաղարյան Մ.		
4.	Կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերման վերլուծություն	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Ճաղարյան Մ.	01.03.21-01.04.21	Հաշվետվություն
5.	Հարցման արդյունքների վերլուծություն	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Զաքարյան Մ. Ճաղարյան Մ. Յոլչյան Ռ. Ստեփանյան Հ.	15.03.21-01.04.21	SWOT վերլուծության արդյունքներ (ըստ ամբիոնական առարկաների)
6.	SWOT վերլուծության արդյունքների քննարկում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Զաքարյան Մ. Յոլչյան Ռ. Սարոյան Կ. Ճաղարյան Մ.	01.04.21-15.04.21	Եզրակացություններ
7.	Առաջատար բուհերի (ԵՊՀ, ՀՌՀ, ՄՊՀ) կրթական ծրագրերի բենչմարքինգ:	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Սարոյան Կ. Ճաղարյան Մ.	01.03.21-01.04.21	Հաշվետվություն
8.	Առաջարկությունների քննարկում և փոփոխությունների ծրագրի մշակում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Յոլչյան Ռ. Սարոյան Կ. Ճաղարյան Մ.	15.04.21-01.05.21	Փոփոխությունների ծրագիր
9.	Կրթական ծրագրի վերջնարդյունքների վերանայում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Զաքարյան Մ. Յոլչյան Ռ. Սարոյան Կ. Ճաղարյան Մ.	01.05.21-01.06.21	Կրթական ծրագրի վերջնարդյունքներ
10.	Առարկայական մասնագրերի վերանայում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Ճաղարյան Մ.	01.06.21-15.06.21	Ճշտված մասնագրեր
11.	Կրթական ծրագրում փոփոխությունների իրականացում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Ճաղարյան Մ.	15.06.21-05.07.21	Վերանայված կրթական ծրագիր

12.	2021-2025 ուս. տարիների ՀԻԿՄ կրթական ծրագրի վերջնականացում	Հովակիմյան Ա. Սիմոնյան Գ. Զաքարյան Մ. Ճաղարյան Մ.	15.06.21-05.07.21	2021-2025 ուս. տարիների ՀԻԿՄ կրթական ծրագիր նկարագրություն